ՃՃ.

Արդէն լուեալ էք զմեռանիլ սուլթան օսմանին իւրով հիւանդութեամբ, և թէ ի նոյն օրի ի 29 հոկտ. նստաւ փոխանակ նորա սուլթան մուստաֆան որդի սուլթան ահմէտին բազում խաղաղութեամբ...: Ոչ սակաւ փոփոխութիւն եղև մեծամեծաց ի թագաւորէն վրէժ առեալ վասն եղբօր իւրոյ դեղակորոյս լինելոյ կամակցութեամբ նոցա ընդ առաջնոյն: (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1757 Նոյեմբ. 18. Կ. Պոլիս):

ՃՃԱ.

Յամին 1757 հոկտեմբերի 29 ի 4 ժամուն նախ քան զկէս գիշերն մեռաւ տաճկաց թագաւորն սուլթան օսմանն, և ընդ առաւօտն ի 30 հոկտ. բերեալ զսուլթան մուստաֆան զ42ամեայն զորդին սուլթան ահմէտին նստուցին ի տեղի նորա խաղաղութեամբ առանց ճիկ հանելոյ ուրուք ի յուժաւորաց. և ի նոյեմբերի 23.ին յաւուր հինգշաբաթի գնաց յէյիպ, և ընդ մէջ ածաւ թուր, և թագաւորեաց ուրախութեամբ ամենեցուն: (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1757 Նոյեմբ. 19. [Կ. Պոլիս]):

ՃՃԲ.

Վասն եզոմեան աթոռոյն ծանիք, զի է այն գործած հնդկաց եկեալ ի հնդկաստանէ. և է լեալ սա աթոռ փաշայից ղզբլպաշի. այլ և տաճկաց. և ի սատակել թահմազին եաղմայ արարեալ. և ագոյցք նորա ոչ են հասարակ ոսկի, այլ փղոսկի. իսկ փայտն է անփուտ և անգիւտ, զորոյ երկու սիւնակսն ուխտիւք խնդրեալ, խլեցին յայլ չինուած և ի տեղի նորա գայլ փայտ եդին[1]: (Հ. Մկրտիչ Անանեան առ Մելգոնեան, 1757 Նոյեմբ. 19. [Կ. Պոլիս?]):

ՃՃԳ.

Յաղագս պատերազմի այսչափ ինչ լսեմք առ ժամանակաւս, զի ասեն նէմցէք զբերդն ըշվայնից, երկու անգամ գրոհ տուեալ ի վերայ և անկեալ են ի նէմցէից մինչև յառնուլ զքաղաքն 6000 զինուորք, և հանեալ են ի քաղաքէ աստի երկու միլեօն ոսկի, կէս միլեօնի մթերգ և զէնք պատերազմի յամենայն տեսակաց անհամար. և զայս քաջութիւն արար նատաշտի սպարապետն: Ապա յետ այսորիկ առին և չպռասլավ. յետ այսր պատահեալ միմեանց զօրք թագուհւոյն ընդ զօրաց պռուշին կոտորեալ են զ5 գլխաւոր զօրագլուխս և 20000 զօրս, առին և զքաղաքն բռիք և պաշարեալ են արդ զքաղաքն նայս: (Հ. Թադէոս վրդ. [Կ. Պոլսոյ Գրիգորեան] առ Մելգոնեան. 1757 դեկտ. 9. [Փերրօվարատին]):

ՃՃԴ.

Ի կողմանէ պատերազմաց միշտ անպակաս է զրոյց. յանցեալսն թագուհին յաղթեաց բանակի պրուշին որ էր քառասուն հազարաց. և էառ զամենայն կահ կարասի նորա. և մնաց պրուշին

---

1. Այս հնդկական փղոսկրազարդ գեղեցիկ գահը կը գտնուի ցայսօր ի Ս. Ղազար Լորտ Պայրընի սենեակին մէջ.